

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մինչ “Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին” ՀՀ օրենքի ընդունումը (1995թ. նոյեմբերի 7), Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանված էր 37 շրջանների: 1995 թվականից հանրապետությունը բաժանված է 11 մարզերի, այդ թվում՝ Երևանն ունի մարզի կարգավիճակ: Հայաստանի Հանրապետությունում կա 48 քաղաք և 952 գյուղ, որոնցից 8-ը ներառված են քաղաքային համայնքների կազմի մեջ, իսկ մնացած գյուղերը՝ 871 գյուղական համայնքներում:

Նախկին քաղաքատիպ ավաններից 10-ը (Անիպեմզա, Ազատամուտ, Արագած, Արգել, Արզնի, Այրում, Գազարին, Նոր Խարբերդ, Չորագետ, Պեմզաշեն) ստացել են գյուղական բնակավայրերի, 17-ը՝ Ագարակ, Ախթալա, Ապարան, Բերդ, Դաստակերտ, Եղեգնաձոր, Թալին, Թումանյան, Շամլուղ, Ճամբարակ, Մարալիկ, Մարտունի, Մասիս, Նոյեմբերյան, Վայք, Վարդենիս և Վեդի, քաղաքների կարգավիճակ, իսկ Նուբարաշեն քաղաքատիպ ավանը, թաղի կարգավիճակով, ներառվել է Երևան քաղաքի կազմի մեջ:

Սույն ժողովածուի կազմման աշխատանքներին օժանդակել են ՀՀ տարածքային կառավարման նախարարի աշխատակազմը, ՀՀ մարզպետարանները, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան և Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը:

*ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի  
և վերլուծության նախարարություն*

### *Պայմանական նշաններ*

-	Երևույթը բացակայում է
...	Տվյալները բացակայում են
0.0	Չնշին մեծություն